ընդ սա, 'ի ձեռն կնոջ իւրոյ՝ որ էր քոյր Տիգրանայ, եկ 'ի վերայ նորա պատերազմաւ. և ինքնին եհար նի լակաւ 'ի փոր նորա և սպան զԱժդահակ, որ 'ի մեր լեզու Վիշապ թարգմանի: Սա շինեաց զանուանի քաղաքն՝ որ յեղը Տիգրիս գետոյն՝ որ է Յամիթ (Տիարպաքիր), և կոչեաց զնա յանուն իւր Տիգրանակերտ:

Տիգրանայ Դ. որդիք էին, Պապ, Տիրան, Վահագն և Առաւան: Եւ Առաւանայ յորդւոց յորդիս փոխանորդեցին կարգաւ այսպէս. յԱռաւանայ՝ Սերսեհ. 'ի Սերսեհէ՝ Օարեհ, ուստի ազգն Օարեհեանք. 'ի Օարեհէ՝ Երմոգ. յԵրմոգայ՝ Բագամ. 'ի Բագամայ՝ Վան. 'ի Վանայ՝ Վահէ: Ի սորա ժամանակին եկեալ ի Յունաստանէ Աղեքսանդր Մակեդոնացի, և մարտնչեալ ընդ նա՝ սպանաւ Վահէ. և իշխանութիւնն Հայոց ազգին գաղարեցաւ, որպէս և ամենայն իշխանութիւնք 'ի հրամանս Աղեքսանդրի հնազանդեցան:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան